

## ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹ ԵՒ ՄՄՐԱՄԵԼԻՔ

Դրամատիկական պօէմա դիւցազնական ժամանակներից

### Պ Ա Տ Կ Ե Ր 6.

Մսրամելիքի ապարանքի վերնայարկում ճեմելիք։ Արաբական մողայիքով զարդարուած սիւներ, որոնք վերևում միանում են օմեգաձև կամարներով։ Ճեմելիքից երևում են հեռու ընկած լեռները, որոնց ստորոտում ընդարձակ դաշտավայր՝ իր ոլորապտոյտ մեծ ճանապարհով։ Ճեմելիքում դրուած է մի փափուկ գահաւորակ, ծածկուած կերպասով և ոսկեկար թաւշեայ մութաքաններով։ Մսրամելիքի կինը թեք ընկած՝ ծխում է դայլան։ Սիւների մօտ կանգնած է Մսրամելիքի աղջիկը՝ երեսը դարձրած դէպի մեծ ճանապարհը և նայում է հեռուն։

---

ՀՀ. Մայրիկ, գալիս են... դուրս եկան ձորից...

Խամ. Լաւ, մի խենթանար ուրախութիւնից։

(Վեր է կենում գնում աղջկայ մօտ.)

ՀՀ. Այս, տեսնո՞ւմ ես այն ձիաւորներին.

Հեռու, շատ հեռու, ձորի բերանին։

Մերոնք չեն. մերոնք ուղտերով կը գան։

ՀՀ. Ինչու ուրեմն այսքան ուշացան։

Ախ, մի շուտ գային... Ի՞նչ կ'ուրախանանք...

Մէկ էլ կը տեսնենք—զըրանգ-հա-զըրանգ

իրար ետկից բարձուած ուղաերը

Բերում են ահա ոսկու բեռները...

Քառասուն բեռ ոսկի—հեշտ բան է ասել,

Ախ, մայրիկ, ի՞նչեր կարող ենք անել...

\*) ՏԵս «Մուլճ», № 4.

Իսմ. Ի՞նչ պիտի անես:  
 Հէյ. Կ'անեմ—կը տեսնես:  
 Ամենից առաջ ճակատիս համար  
 Ես պիտի շինեմ մի լաւ ոսկեշար.  
 Յետոյ՝ այնպիսի գեղեցիկ մանեակ,  
 Որ ամբողջ կուրծքըս փայլի ոսկու տակ.  
 Ի՞նչ տեսակ տեսակ ապարանջաններ,  
 Ի՞նչ շրքեղ քամար, մատանիք, օղեր...  
 Մի խօսքով պիտի լոյս-արև դառնամ,  
 Արեգակի պէս փայլեմ ու շողամ...

Իսմ. Իսկ ես՝ տան եղած բոլոր հասարակ  
 Թասեր, զաւաթներ, կրժեր, ափսէներ  
 Վերցընեմ պիտի և նըրանց տեղակ  
 Թաղերում շարեմ ոսկի անօթներ:  
 Հէյ. Ի՞նչ լաւ կը լինի, ի՞նչ հիմնալի.  
 Ուր որ կը նայես—բոլորը ոսկի:

(Մանում է Մորամելիքը: Դրան մէջ կանգնելով՝ ծանր  
 շունչ է քաշում:)

Մորամ. Օ՛խ, իմ ծերութիւն... շուտ վըրայ հասար...  
 Հէյ. Հայրիկ, դու եկմը: (Մօտենում է հօրը:)  
 Մորամ. (Բունելով աղջկայ զլուխը եւ համբուրելով նա-  
 կատից՝)

Քաղցրիկըս, այսօր վերջապէս կը գան:  
 Հէյ. Երբ: Մուլթն ընկաւ, իսկ նըրանք չկան:

(Մորամելիքը թեք է ընկնում տախտի վրայ:)  
 Հայր, ի՞նչ պիտ անես դու այնքան ոսկին.  
 Մեղ բաժին կը տամ—ինձ ու մայրիկին:  
 Մորամ. Զեղ էլ, սիրոնըս, բաժին կը հանեմ,  
 Թէպէտ ես ոսկու մեծ կարիք ունեմ:  
 Շատ ծըրագիրներ կան իմ առաջին.  
 Մեծ փայլ պիտի տամ մեր ամարաթին:  
 Ամենից առաջ իմ այս պալատը—  
 Աստիճանները, սիւնները, պատը—  
 Բոլորը պիտի զարդարեմ ոսկով,  
 Այնպէս որ դըրսից արտաքին տեսքով

Շողշողայ, ինչպէս լոյս արեգական:  
 Երբ Մըսուր մըտնի մի օտարական,  
 Թող ըսքանչամայ, ինձ տայ երանի  
 Եւ իմ համբաւըն ամեն կողմ տանի:  
 Տեսնեմ այսուհետ էլ ո՞ր խալիֆան  
 Պիտի պարծենայ իր ճոխ պալատով  
 Եւ հարըստութեամբ, երբ Մըսրայ հըսկան  
 իր ամարաթը կը ծածկի ոսկով:  
 Ամեն տեղ՝ Հալեպ, Դամասկոս, Բաղդադ  
 Յայտնի կը լինի իմ շրքեղ պալատ:

(Մտնում են Կոսրաղին եւ Զարխաղին երեսները կապած:)

Այս ինչ եմ տեսնում... ի՞նչ է պատահել...

Ո՞վ համարձակուեց ձեզ վիրաւորել:

**Կոս.** Տէր, եթէ ամբողջ Սասումը քանդենք,  
 եթէ այդ երկրի բընակիչներին  
 Բոլորին մէկ մէկ սըրի անցընենք,  
 Յետոյ բոլորը յանձնենք կըրակին,  
 Դեռ էլ քիչ է այդ ժողովը դիմին:

**Մսրամ.** Ո՞ւր է Դաւիթը... ինչու շըղթայած

Նըրան չեմ տեսնում իմ առաջ կանգնած:

**Զարին.** Ինչպէս որ դատարկ մենք գընացել ենք,  
 Այնպէս էլ դատարկ վերադարձել ենք:

Եւ եթէ մի բան բերել ենք,—ահա

Այս վէրքերըն են մեր դէմքի վըրայ:

**Մսրամ.** Իսկ եօթը տարուայ իմ խաղջը—ոսկին...

**Կոս.** Ա՛խ, հազար անէծք Սասմայ ծուռ Դաւիթին.

Կանայք, աղջկերք, ոսկին—բոլորը

Արդէն պատրաստ էր, և միւս օրը

Վըճուել էինք մենք ուղտերը բարձել,

Եւ մեծ քարվանով ճանապարհ ընկնել:

Բայց Դաւիթ եկաւ, մեր ոսկին խըլեց,

Ազատեց կանանց

Եւ կոյս աղջկանց

Եւ մեզ էլ ահա այս օրըս գըցեց...

**Զար:** Մեր արիւնը, տէր, վըրէժ է կանչում:

Կոս.

Զէնով-Յոնանի տան պատըշգամբում  
 Չափում էինք մենք հաւաքած ոսկին,—  
 Յանկարծ փողոցում աղմուկ է լրսում,  
 Հայհոյանք և ճիչ ամբոխի միջին:  
 Այնքան հըրեցին, որ դուռը բացուեց,  
 Դաւիթը մըտաւ աչքերը կարմրած.  
 Նըրա ետևից ամբոխը խուժեց  
 Գոռում-դոչումով, անչափ կատաղած...  
 Եկաւ Դաւիթը և կուտը խըլեց  
 Ու ասաց. «Թող ես չափեմ այդ ոսկին»...  
 Ու յետոյ հարուած հարուածի ետքից  
 Կուտով հասցըրեց մեր քիթ-պըռունզին...  
 Արիւնը խըփեց բացուած վէրքերից,  
 Կարմիր ներկելով շորեր և գետին...»

Մսրամ.

Եւ դուք լուռ ու մունջ բոլորը տարած...  
 Եւ թողիք, որ նա այդպէս խայտառակ  
 Ծեծէր, անարգէր իմ ծառաներին  
 Եւ կուտով ապտակ տար ձեր դընչերին...  
 Իսչու դուք իսկոյն

Նըրա գըլուխը չջախջախեցիք,  
 Միթէ չունէիք մի սուր, մի դաշոյն,  
 Որ նըրա լէշը գետին թափէիք...»

Կոս.

Ղուրանը վըկայ, Դաւիթը հիմա  
 Մի ազրահէլ է, մի մեծ աժդահա:  
 Ուղիղ եմ անում, երբ գոռում էր նա,  
 Սարսափ էր բերում ամենքի վըրայ,  
 Կարծես թէ առիւծ լինէր մըռնչում,  
 Երբ կէս գիշերին որսի է գընում...  
 Երբ նա թերթում էր կարմիր աչքերը,  
 Կարծես աչքերից կըրակ էր թափում,

Իսկ երբ փոխում էր ուժեղ ոսմերը,  
 Ծառը դողում էր, տերկը շարժւում...  
 Երկու բըռունցքով, եթէ կամենար,  
 Նա մեզ բոլորիս կը ջընջէր իսպառ:

Մսրամ.

Վըրէժ, ծ, վըրէժ... Ի՞նչպէս կ'ուզէի,

Որ այդ գարշելին մի ձեռքս ընկնէր...  
Ես նըրան այնպէս բըռունցը կը տայի,

Որ իր ծընընդեան սև օրը յիշէր...

Կոս. Հիմա Դաւիթը մենակ չէ, տէր իմ,

Ամբողջ Սասումը կանգնած է մէջքին:

Մսրամ. Իսկ Զէնով-Յոնան... Նա Էլ նըրանց հետ:

Կոս. Նա համարեա չկայ այսուհետ:

Զարիս. Ժողովը մէջ Էլ ձայն չունի նա.

Ամենքի աշքից ընկած է հիմա:

Մսրամ. Է՞ն, բաւական է: Հիմա լըսեցէք

Եւ հըրամանըս լաւ կատարեցէք:

Ես պահանջում եմ ձեզանից շուտով

Երկրումը անել մեծ զօրաժողով:

Հասակների մէջ խըրառում չլինի.

Խւրաքանչիւրը զէնք պիտի առնի,

Անրեղ պատանի և թէ ալետը

Հաշուում է զինուոր:

Ով որ կարող է սուր ու թուր շարժել,

Ով որ կարող է նետ-աղեղ բռնել,

Բացի կանացից

Եւ մանուկներից,

Բոլորը պիտի անյապաղ ելնեն

Եւ Մըրայ դաշտում մէկ տեղ ժողովուեն:

Բայց այս Էլ ասեմ, որ Էլ չնայէք.

Ով հակառակուեց, ուժով կը տանէք:

Կոս. Աչքիս վըրայ, աէր: Ես խոստանում եմ:

Մսրամ. Կոսրազին, ես քեզ նըշանակում եմ

Զօրքիս դըլխաւոր հրամանատարը.

Իսկ դու, Զարխազին, դու Էլ կը լինիս

Սըրա հնաղանդ կամակատարը:

Զարիս. Խոնարհ ծառադ եմ. ինչպէս կը վըճռես:

Մսրամ. Հաշուած են արդէն Սասմայ օրերը,

Եւ վայ ապլստամբ այդ ժողովը զին,

Երբ որ իմ զօրքի ահեղ զընդերը

Կը հասնին այդ պիղծ, անիծեալ երկրին...

Եթէ ձեր սըրտում մընացել է դեռ  
Խըղճի մի նըշոյլ,—խեղդեցէք իսպառ,  
Աղաչանք և լաց և արտասունքներ  
Նըշանակութիւն չունին ձեզ համար:  
Ձեր գործը լինի—արհաւիրք սըփոել,  
Աւերել, քանդել, այրել, կոտորել...  
Թէ ծեր, թէ մանուկ, տըղամարդ թէ կին—  
Սըրի անցնել և թափել գետին:  
Հըրդեհել գիւղեր, աւաններ ցանքսեր,  
Իսպառ կործանել վանքեր, տաճարներ...  
Քար քարի վըրայ չպէտք է մընայ,  
Սասումը պիտի անապանտ դառնայ:

**Կոս.** Տէր իմ, քո կամքը սուրբ է մեզ համար:  
**Զարխ.** Կը լինի այնպէս, ինչպէս կամեցար:  
(Կոսբաղին և Զարխաղին խոնարհ գլուխ տալով հեռանում են:)

**Ա. Ե.** Ափսոս մեր յոյսեր... բոլորը կորաւ...  
**Մսրամ.** Ես յիմարացայ: Երբ Մըհեր մեռաւ,  
Դաւթին էլ իսկոյն պիտի վերջ տայի.  
Եւ մօրը խօսքին ականջ չանէի:  
Դաւիթ մանուկ էր, երբ դու ինձ առար.  
Անտէր մընացած մի որբ էր թշուառ.  
Ի՞նչպէս թողնէի, որ իմ զաւակին  
Մատաղ անէին աշքիս առաջին:  
**Մսրամ.** Կարծես թէ բարի մի պըտուղ էր նա...  
Գործերը տեսամը—դէ հըրճուիր հիմա:

## Պ Ա Տ Կ Ե Բ Ր Դ.

Զէնով-Յոնանի տան բակը—հինգերորդ պատկերի տեսարանը: Դրսից գալիս է Զէնով-Յոնանը սաստիկ տիուր և վհատած: Սառիան, նրա կինը, որը պատշգամբումնստած՝ կար էր անում, նկատելով ամուսնու այլայլուած դէմքը, ինըն էլ գունատում է, նախազգալով մի վատ համբաւ: Զէնով-Յոնանը հազիւ է կարողանում ոտի վըրայ կանգնել և օրօրուելով իրան նետում է ծառի մօտ, որի տակ դրուած է նստարան. այնտեղ

նոտում է հանգստանալու: Լսելի են նրա թոյլ հառաջները,  
ինչպէս հիւանդի կամ սաստիկ վհատուած մարդու: Սառիան  
ձգում է կարը և շտապում նրա մօտ:

Սառ. Յոնան, հիւանդ ես... թէ էլի նոր լուր...

Ի՞նչ է պատահել... ինչի ես տըխուր:

Զէն.-Յոն. Էլ մի հարցընի, Սառիա... Քիչ ջուր:

(Սառիան զնուլ է զրի:)

Օ՛հ, մեռայ, մեռայ... Ի՞նչ օրի հասանք...

Սա հօ կեանք չէ, այլ միմիայն տանջմաք...

(Սառիան զաւարով ջուր է բերում. նա խմում է:)

Սառ. Զարմանալի է, առողջ դուրս եկար,

Իսկ վերադարձար գունատ և տկար:

Զէն.-Յոն. Վայ մեզ, Սառիա, վայը մեր գըլխին...

Սառ. Չլինի նորից Սասմայ թըշնամին...

Զէն.-Յոն. Այս, նա... անթիւ զօրքեր է բերել,

Սեղան-սարի մօտ բանակը գըրել:

Սառ. Էլ ի՞նչ ենք նըստել... փախչենք սարերը...

Զէն.-Յոն. Ի՞նչ օգուտ երբ որ նըրա գնդերը

Մեր բոլոր երկիր պիտի հեղեղեն.

Ուր որ էլ գընանք, մեզ պիտի հասնեն:

Սառ. Դաէթ, նըզովեալ լինի քո անուն.

Այս ի՞նչ կըրակ ես մեր գըլխին թափում...

Զէն.-Յոն. Այդ ինելագարը եթէ չը լինէր,

Մելիքըն ինչու մեզ պէտք է յիշէր:

Քանի տարի է, որ մեզ մոռացած՝

Ոչ նեղում էր մեզ, ոչ խարջ պահանջում...

Ուրախ էինք մենք, մեզ հետ էր Աստուած,

Խաղաղութիւն էր չորս կողմը տիրում.

Ապահով էին, զոհ և բաղդաւոր

Հովիւ, հողագործ և արհեստաւոր...

Հիմա ամեն տեղ սարսափ, ահ ու դող,

Յուսահատութիւն և իրարանցում,

Եւ ամեն մէկը գըլխին շողացող

Մըսրացոց արնոտ սուրբն է տեսնում...  
 Վայ մեզ, զուր են մեր բոլոր ջանքերը,  
 Զուր են գանձերը թաղում հողի տակ,  
 Թողնում տուն ու տեղ, փախչում սարերը—  
 Զուր է բոլորը և աննպատակ.  
 Ոչ սար ու ձորեր, ոչ մութ քարանձաւ  
 Մեզ չեն օդներու մեր վերջը հասաւ:

(Մտնում է Դաւիթը՝ անհանգիս եւ փուրկու:)

Դաւ. Հօրեղբայր, ցնյց տուր. որտեղ իմ հօր  
 Հազի շորերը և զէնք ու զրահ:

Ձէն.-Յոն. Էլի երան ես տեսել դու այսօր:  
 Ի՞նչ հազի շորեր, ի՞նչ զէնք ու զըրահ...

Դաւ. Բեր այստեղ իմ հօր կապէն-խարուկին,  
 Խաչ-պատարագին աջ թևի վըրայ,  
 Ոսկի քամարըն ու գըլսի գիւտին.  
 Բեր այստեղ իմ հօր կայծակի թուրը  
 Եւ հըրեղէն ձի՝ Քիւռկիկ-Զալալին:

Ձէն.-Յոն. Էլի պառաւը տըւեց այդ լուրը:

Դաւ. Այն, պառաւը իմ նանին ասաց,  
 Որ այդ ամենը քեզ մօտ է պահուած:

Ձէն.-Յոն. Նա ջաղու կին է, հաւատա, Դաւիթ,  
 Մի լըսիր նըրա ամեն մի խօսքին.

Մի օր էլ փորձանք կը բերի գըլխիդ,  
 Ինչպէս արել է նա շատ շատերին:

Դաւ. Հօրեղբայր, դու ինձ ուզում ես ցանել...

Զուր հոգուդ վըրայ մեղք մի՛ վերցընի.

Պառաւից ես միշտ լաւըն եմ տեսել,

Ինչքան էլ որ նա կուռարար լինի:

Երբ մեռաւ Մըներ, դու էլ լաւ գիտես,

Որ քո տան մի խեղճ որբ մընացի ես,

Եւ դու քո կընկայ խելքով վերցըրիր

Զեռիցը բըռնած՝ դուրս վըռընդեցիր:

Բայց այն պառաւըն ինձ իր մօտ տարաւ,

Պահեց, մեծացրեց, տէրութիւն արաւ:

Իմ հօր գործերից անտեղեակ էի,

Բան չէիր ասել, ի՞նչ իմանայի...  
 Եւ նա շատ բաներ պատմեց Մըհերից,  
 Եւ ես իմացայ միայն նըրանից,  
 Թէ ով էր Մըհեր և ով է Դաւիթ.  
 Ես հիմա ի՞նչպէս հաւատամ խօսքիդ...  
 Ես ծագում էի ազնիւ արիւնից,  
 Ինձ ռամիկ հովուի ընկեր շինեցիր  
 Եւ մի ահազին մահակ տալով ինձ  
 Ու մի ջուխտ սոլեր՝ այսպէս ասացիր.  
 «Պարապ մի՛ նըրատիր, գընա սարերը  
 Արածացըրու այնտեղ գառները»:  
 Ես էլ գընացի: Մըհերի տըղան  
 Դարձաւ գառնարած, ի՞նչպէս մի անբան:—  
 Բայց այն պառաւըն ինձ լաւ խըրատեց,  
 Հօրըս գործերը առաջըս դըրեց...  
 Ու կամաց կամաց աչքըս բաց եղաւ,  
 Ինչ որ մութըն էր, բոլորը տեսաւ:  
 Ես նըման էի մի անասունի,  
 Որ դատողութիւն և ոչ խեթ ունի:—  
 Կարծես Հոգի Սուրբ իշխաւ ինձ վըրայ,  
 Ու ես աշխարհիս չարըն ու բարին,  
 Որ ծածկուած էր սև խաւարի միջին,  
 Կայծակի բոցոտ լոյսի մէջ տեսայ:  
 Ու ես վըճուեցի իմ հօր արժանի  
 Ժառանգը լինել,  
 Սասմայ անօրէն թըշնամիների  
 Բերանը պատռել:  
 Ես կը մոռանամ քո աղ ու հացը,  
 Որովհետեւ դու եղբօրըդ որդուն,  
 Վըկայ է վերև բարի Աստուածը,  
 Դուրս վըռընդեցիր, ի՞նչպէս քոսոտ շուն...  
 Բայց նա, սըրտացաւ ծընողի նըման,  
 Ինձ տարաւ իր մօտ և կերպալրեց,  
 Այնքան խըրատեց, քարողեց այնքան,  
 Որ վերջ ի վերջոյ նա ինձ մարդ շինեց:—

Ահա թէ ով է այն ջաղու կինը:

Հիմա հասկացածր դու նըրա գինը...

Դէհ, բաւական է... Քո բարի կամքով

Լաւ է ուղածը զընա բեր շուտով:

Տես, չեմ հարցընի, հօրեղբայր Յոնան,

Օտար ես դու ինձ թէ մօտ ազգական:

**Ձէն.-Յոն. Մի** ասա, տեսնեմ, ի՞նչ պիտի անես

Հօրըդ շորերը... Դու պիտի հազնե՞ս:

**Դաւ.** Հօրըս շորերը ես պիտի հազնեմ,

Կայծակի թուրը քամարիս կապեմ.

Ու հեծած իմ հօր Քուռկիկ-Զալալին՝

Կըոփւ պիտի տամ Մըսրամելիքին:

**Ձէն.-Յոն. Նա** վեր կ'առնի քեզ գետնովը կը տայ—

Սաղ տեղըդ միայն ականջըդ կը մնայ:

**Դաւ.** Այդ մենք դեռ յետոյ, յետոյ կը տեսնենք:

**Ձէն.-Յոն. Զէ,** Դաւիթ, արի մի խորհուրդ անենք:

Վատ ժամանակ է, յամառ մի լինիր.

Ես ապրած մարդ եմ, իմ խօսքին լըսիր:

Կորած է Սասում, մենք էլ ենք կորած.

Լինելու է մեծ, շատ մեծ կոտորած:

Մըսրամելիքը երդում է կերել

Սասում ամայի անապատ շինել:

Ուրիշ ճար չկայ: Արի վեր կենանք

Ժողովըդի հետ Սեղան-սար զընանք,

Մըսրամելիքի ոտքերըն ընկնենք,

Պազնենք փեշերը, աղաչանք անենք,

Թող սրտի ուղած խարջերն առնի,

Թող ինչքան կ'ուզէ գերիներ տանի—

Մեր կոյս աղջըկանց

Ու ջահէլ կանանց—

Միայն խընայի մեզ ու ձեռ չտայ

Ու եկած ճամբով էլի ետ զընայ:

**Դաւ.** Ինչեր ես ասում, հօրեղբայր Յոնան...

Վայ, ի՞նչ ասեմ քո տըղամարդութեան...

Մըհերի եղբայր—ու այսքան վախկոտ...

- Հօրեղբայր Յոնան, ամօթ է, ամօթ։  
 ԶԵՆ.-ՅՈՆ. Այս ձեռքը, որ դու չես կարող կըտրել,  
 Լըսում ես, Դաւիթ - պէտք է համբուրել։  
 Դաւ. Այ քեզ մի՝ յիմար ըստրուկի առած...  
 ԶԵՆ.-ՅՈՆ. Հապա ի՞նչ անես, երբ որ քո դիմաց  
 Ասթիւ անհամար զօրքեր են կանգնած.  
 Երբ որ հաշիւ կայ ծովի աւազին,  
 Իսկ հաշիւ չը կայ թըշնամիներին...  
 Դաւ. Դաւիթ մենակ չէ, ունի ընկերներ,  
 Զինուած ու պատրաստ հազար կըտրիճներ...  
 Դէ, բերում ես, բեր կամ տեղին առա.  
 Ես ըշտապում եմ... ժամանակ չկայ։  
 ԶԵՆ.-ՅՈՆ. Շըւարել եմ ես... Աստուած, ի՞նչ անեմ...  
 Դաւ. Զես ուզում բերել - ինքըս կը մըտնեմ,  
 Տակ-գըլուխ կ'անեմ քո բոլոր տունը,  
 Ինչ որ ուզում եմ, ես այն կը գըտնեմ,  
 Ու վերջը կը մնայ քո վատութիւնը։  
 (Դաւիթը զնում է տան ներսը։)  
 ԶԵՆ.-ՅՈՆ. Դաւիթ, սիրելին, Աստուծուն նայիր։  
 Սառ. Դէ դու էլ, Յոնան, ետկից հասիր։  
 Ինչ որ ուզում է, տուր իրան կորչի,  
 Իր հօր թողածը թող գըլիխն կըպչի։  
 (Զէնով-Յոնանը զնում է Դաւիթի ետելից. Իիչ յետոյ  
 վերադառնում է։)  
 Սառ. Հը, ազատուեցիր այն պատուհասից.  
 ԶԵՆ.-ՅՈՆ. Ի՞նչպէս լաց եղաւ ուրախութիւնից,  
 Երբ տեսաւ իր հօր թողած շորերը,  
 Համբուրեց թուրը, խաչը, զէնքերը...  
 Սառ. Կարծում է, թէ հագին ունենայ  
 Մըհերի շորը, Մըհեր կը դառնայ։  
 ԶԵՆ.-ՅՈՆ. Երկի, խելքըն այդքան է կըտրում։  
 Սառ. Հիմա ի՞նչ անենք, քեզ եմ հարցընում։  
 ԶԵՆ.-ՅՈՆ. Ի՞նչ պիտի անենք։ Մեր յոյսը՝ Աստուած։  
 Թող նա մեզ գըթայ, լինի ողորմած։  
 Իցէ թէ մեր լաց ու արտասուքով,

Մեր աղաչանքով և ընծաներով  
Թըշնամու սիրտը կարենանք շահել  
Ու այսպէս մի կերպ Սասումը փըրկել:

(Գալիս է Դաւիթը՝ կերպարանափոխուած։ Հազած է իր  
հօր կապէն, մէջքին մի քանի տակ փաթաթած քամարը, աջ  
թէկի վրայ խաչաձև նշան։ «Իսաչ պատարագին»։ գլխին դրած  
է սաղաւարտ—«գիւտին»։ կողքից կապել է երկայն սուրբ—  
«թուր-կայծակին»։ կրծքին ունի զրահ։ Այսպիսի զգեստով նա  
դարձել է մի իսկական դիւցազն և գեղեցիկ տղամարդ։ Նրան  
տեսնելուն պէս Սառիան քմծիծաղ ասում է Յոնանին։)

Սառ. Գօտին քառառն փաթ է տըւել,

Թուրը գետնին քաշ է ընկել։

Զէն.-Յոն. Դու դեռ պլաստիկ ես այդ շորի համար։

Դաւ. Աչքըդ կը սովորի—կը լինի յարմար։  
Ե՛խ-վախ, հօրեղքայըր... Վե՞ր կառնի Աստուած։  
Մըներ այս տեսակ գանձ լինի թողած,  
Ես բան չիմանսմ, ինձանից ծածկես,  
Մընդուկների մէջ պինդ փակած պահես...  
Ինձ յայսնի էր, որ միայն դմերը  
Սիրում են ծածկել իրանց գանձերը  
Հեռու տեղ, խաւար քարանձաւներում,  
Մութըն աշխարհում։

Ոչ իրանք են այն գանձերից օգտուում

Ոչ ուրիշներին թողնում մօտենալ...

Նըրանք դմեր են, դու—մարդ կատարեալ։

Շատ երկչուրն ես, ես ու իմ հոգին...

Ե՞հ, հիմա մընաց Քուռկիկ-Զալալին։

Գընամ նըրան էլ հանեմ ախոռից։

(Գնում է։)

Զէն.-Յոն. Ինչպէս մի խընճոր՝ կէս արած միջից,

Մըներ ինքըն է առաջիս կանգնած։

Սառ. Մանաւանդ հիմա՝ հօր շորըն հազած։

Զէն.-Յոն. Բայց հաստակող է. ասածըն արաւ։

Ափսոս այն շորեր... ոնց խըլեց տարաւ։

Սառ. Զարմանալի է, ոչ մի ահ չ'ունի։

Զէն.-Յոն. Տայ Աստուած, իր հօր արժանի լինի։

Սառ. Ասենք կըտրիճ է, բայց շատ է ջահէլ,  
Մբթէ կարող է Մելիքին յաղթել:

ԶԵՆ.-ՅՈՆ. Նըրա հասակում մարդու ուժերը  
Օր օրի վըրայ աւելանում են.

Իսկ հասակաւոր մեզ պէս ծերերը  
Օրէցօր, ընկնում և թուլանում են:

Մելիքըն ինչքան էլ ուժեղ լինի,

Առաջուան ոյժը պակաած կը լինի:

(Կաւում է ձիու ուրախ խրխնջիւն: Մտնում է Դաւիթը՝  
խիս ուրախ:)

Դառ. Լըսում էք, ինչպէս ուրախութիւնից  
Խըրիբնջում է իմ Քուռկիկ-Զալալին...  
Վերջապէս ելաւ իր խաւար բանտից,  
Լոյս-արև տեսաւ, տէր ըզգաց մօտին...

ԶԵՆ.-ՅՈՆ. Դաւիթ, քանի որ ասածըդ արիր,  
Լըսիր, մի բարի խորհուրդ տամ ես քեզ:  
Ինչ որ քեզ ասեմ, լաւ միտըդ պահիր,  
Եւ դու փորձանքից հեռու կը լինես:  
Տէր մի՛ արացէ, թէ քեզ պատուհաս  
Կամ ձախորդութիւն մի օր պատահի,  
Խաչ-պատարագի անունը կը տաս,  
Նա քեզ փորձանքից ազատ կը պահի:

Դառ. (Համբուրելով աջ թեւի խաչը:)  
Ես մեռնեմ, ով խաչ, քո սուրբ զօրութեան:  
Տունըդ շնչն կենայ, հօրեղբայր Յոնան:

ԶԵՆ.-ՅՈՆ. Հա, մի աղբիւր էլ կը տեսնես ճամբին,  
Որ հըրաշալի զօրութիւն ունի.

Ով որ լողանայ այն ջըրի միջին,

Նա կը զօրանայ և նոր ոյժ կ'առնի:

Հայրըդ էլ երբ որ ճամբայ կը գընար:

Կաթնաղբիւրի մէջ միշտ կը լողանար:

Եւ եթէ դու էլ լողանաս այնտեղ,

Քառամնապատիկ կը դառնաս ուժեղ:

Վերջապէս ահա լըսեցի քեզնից

Հայրական խօսքեր: Տնւր պագեմ ձեռըդ,

Դառ.

4452

Սուրբ պիտի պահեմ ինչ ասացիր ինձ.

Երկարացընի՛ Աստուած օրերըդ:—

Դէհ, մընաս բարեաւ, հօրեղբայր Յոնան:

Զէն.-Յոն. Աստուածածինը քեզ լինի պաշտպան:

Յաջողակ լինես, թըշնամուն յաղթես,

Հըրեղէն սըրով խոտի պէս հընձես:

Թո՞ղ Տէրը փըրկի՛ Սասումը քեզնով,

Եւ, ինչպէս առաջ, ազատ, ապահով

Օր օրի վըրայ ծաղկի, շինանայ,

Բարգաւաճ լինի և պայծառ մընայ:

Դաւ. (Արտասուազին եւ համբուրելով Զէնով-Յոնանի  
ձեռքերը՝)

Ամէն, ծհ, ամէն, իմ հօրեղբայր ջան...

Դու արժանացրիր ինձ քո օրհնութեան...

Վերջապէս դու ինձ հայրութիւն արիր,

Հայրական սիրոյ կարօտ չթողիր:

Հիմա ինձ ների՛ր, թողութիւն արա,

Քեզ քանի՛ անդամ վիրաւորել եմ,

Բայց հաւատա ինձ, Աստուած է վրկայ

Յետոյ ինքըս էլ միշտ զղջացել եմ:

Ի՞նչ կը վայելէր ինձ պէս ջահէլին,

Անպատուել քեզ պէս ծեր ալեւորին:

Դու էլ ինձ համար, մայրիկ, աղօթիր,

Ու սրտանց բարի ճանապարհ մաղթիր:

Շատ դըժուար գործի առաջ եմ կանգնած.

Սըրա ելքից է մեր բախտը կախուած:

Բարի ճանապարհ: Թո՞ղ Զարիսափանը

Ամեն տեղ լինի քո օգնականը:

(Կրկին լաւում է ձիու խրինջիւնը:)

Կըրկին խըրխընջաց Քուոկիկ-Զալալին,

Հըրեղէն իմ ձին:

Հիմա ուղղակի դէպի Սեղան-սար:

Զէն.-Յոն. և Սառ. Բարի ճանապարհ, բարի ճանապարհ:

(Դաւիթը նեռանում է:)

ՁԵՆ.-ՅԵՆ. ԱՌԱ, հազար ափսոս Քուռկիկ-Զալալին,  
Քուռկիկ-Զալալին.

ԱՌԱ, հազար ափսոս մեր գըլիսի գիւտին,  
ՄԵՐ գըլիսի գիւտին.

ԱՌԱ, հազար ափսոս կապէն—խաբուկին,  
Կապէն-խաբուկին.

ԱՌԱ, հազար ափսոս քամարը մէջքին,  
Քամարը մէջքին.

ԱՌԱ, հազար ափսոս մեր թուր կայծակին.  
ՄԵՐ թուր կայծակին,

ԱՌԱ, հազար ափսոս խաչ-պատարագին,  
Խաչ-պատարագին...

(Նկատելով, որ հեռուից Դաւիթը ականջ է դնում:)

ԱՌԱ, հազար ափսոս Դաւիթն անգին,  
Դաւիթն անգին...

Դաւ. (Հեռուից) Հօրեղբայր, թէ դու ինձ չյիշէիր,  
Գըլուխդ ուսիդ չպիտի մընար...

Բայց դու յիշեցիր, անունըս տըւիր,

Թհնդ Տէր Աստուած էլ քեզ կեանք տայ երկար:  
(Գնում է:)

### Պ Ա Տ Կ Ե Ր 8.

ՍԵղան-սարի մօտ մի բարձրութեան վրայ կանգնած է  
Դաւիթն իր զինակիցների հետ: Այս բարձրութեան մօտից  
սկսում է Մսրամելիքի բանակը: Գիշերն անցնելու վրայ է:  
Արևելեան հորիզոնում խաւարի թանձրութիւնը մեղմանում է:  
և երկինքը գնալով աւելի և աւելի յղկած արծաթի փայլ է  
ստանում: Մսրամելիքի ամրող բանակը խոր քնի մէջ է և իր  
լոռութեամբ գերեզմանատան տպաւորութիւն է թողնում: Հեռ-  
ում շարժւում են միայն մի քանի ստուբրներ. դրանք պահա-  
պաններ են:

1-զին. Ի՞նչ մեծ բանակ է, Արարիչ Աստուած:

2-զին. Ուր որ նայում ես—վըրան է խըփած:

- 3-զին. Կարծես թէ մի ծովլ լինի անսահման։  
 4-զին. Բոլորը ճերմակ ձիւնի են նըման։  
 Դաւ. Հէյ-վախ, ընկերներ,  
      իմ քաջ կտրիմներ,  
 Այս վըրանները թէ լինեն բամբակ  
 Ու մենք թէժ կըրակ,  
 Էլի չենք կարող բոլորն այրել,  
 Թէ սըրանք լինեն գարնան գառնուկներ,  
 Մենք քաղցած դայլեր,  
 Էլի չենք կարող բոլորը մաքրել։  
 3-զին. Հիմա ամենքը պինդ մըրափում են։  
 4-զին. Պահապանները միայն արթուն են։  
 1-զին. Յարմար միջոց է. եկէք յարձակուենք  
      Եւ բանակի մէջ շըփոթմունք դըցենք։  
 Մինչև կը զարթնեն, զէնքերը կ'առնեն,  
 Մենք կէսը բըրդած կը լինենք արդէն։  
 Դաւ. Մենք գողմը ենք, որ գողերի նըման  
      Յարձակում գործենք թըշնամու վըրան,  
      Որ յետոյ կանգնեն ասեն մեր դիմաց.  
      «Դաւիթ գող եկաւ, Դաւիթ գող գընաց...»  
      Ո՛չ, թողէք առաջ ես իմաց անեմ,  
      Որ զարթնեն քընից և պատրաստ լինեն։  
      (Բարձրաձայն գոչում է: )  
 Էյ, վեր կացէք,  
 Արթուն կացէք.  
      Ով արթուն է, թող ձին թամքի,  
      Ով ձին թամքեց, թող զէնքն առնի,  
      Ով զէնքն առաւ, թող ձին հեծնի։  
 1-զին. Ի՞նչ իրարանցում...  
 2-զին. Ի՞նչպէս խըռնուեցին...  
 3-զին. Ի՞նչ գոռում-գոչում...  
 4-զին. Փողերն հընչեցին...  
 Դաւ. Պատրաստ կացէք ահեղ կըռուին.  
      Դաւիթն եկաւ ձեր հաւարին...  
      Դէ, իմ քաջեր, հանէք սըրեր,

Վըրայ տըւէք, իմ կըարիճներ,  
Զահէլ-ջիւան իմ ընկերներ...

(Դաւիթը ձին հեծած և կայծակի-թուրը ձեռքին շողով-  
զացնելով առաջ է ընկնում. Նրա ետկից զինակիցները: Մը-  
թերքների մօտ մնում են միայն մի քանի պահապանները, ո-  
րոնք դիտում են կորուը և իրանց զգացումները հաղորդում ի-  
րար):

- 1-պահ. Բահ, Դաւթին մըտիկ... Թուռկիկ-Զալալին  
Թըռչում է ասես երկընքի տակին...
- 2-պահ. Այս ի՞նչ է... կարծես կայծակ է խըփում:
- 1-պահ. Դաւթի թուրըն է այնպէս ֆըրֆըռում:
- 2-պահ. Հասաւ, լաւ հասաւ անիրաւներին:
- 1-պահ. Ընկերներըն էլ ահա մօտեցան:
- 2-պահ. Գըլուխներ է որ թըռչում են գետին:
- 1-պահ. Տես, մի անգամից քանիսըն ընկան:
- 2-պահ. Մերոնք կանգուն են:
- 1-պահ. Ի՞նչպէս հընձում են...
- 2-պահ. Մըրայ բանակում սարսափ է ընկել.  
Այս տեսակ աղէտ հեչ չէին տեսել:
- 1-պահ. Ի՞նչպէս են մերոնք նըրանց հալածում...  
Իսկ և իսկ նըման ուժեղ փոթորկի,  
Որ ոչխարների հօտերը քըշում  
Խառնում է իրար, իրարով տալի:
- 2-պահ. Բայց ուր է ինքը Մըրամելիքը:
- 1-պահ. Զես տեսնում նըրա կանաչ վըրանը,  
Ամենից մեծը և գեղեցիկը.
- Այնտեղ է հիմա Մըրայ իշխանը:
- 2-պահ. Այն ի՞նչ ծերուկ է Դաւթին մօտենում:
- 1-պահ. Դաւիթը նըրան ձեռքով է անում:
- 2-պահ. Վա, հէր կըռիւը դադարեց յանկարծ:
- 1-պահ. Կարծեմ, ծերուկըն ինչ որ բան ասաց:
- 2-պահ. Երկի, խընդրեց իրանց խընայել  
Եւ յաղթութիւնը տարած համարել:
- 1-պահ. Շուտ խելքի եկան, թէ չէ բանակում  
Ոչ ոք կենդանի չը պիտի մընար.  
Բոլորը պիտի փըռուէին դաշտում,

- Եւ դաշտըն արեան ծով պիտի դառնար:
- Զ-պահ.** Գալիս են... Տեսնենք, ի՞նչ լուր են բերում:
- (Քիչ յետոյ գալիս է Դաւիթը մի ծերունու հետ: Գալիս են և զինակիցները: Խաղաղութեան միջնորդը մի զառամեալ աւլոր է՝ երկայն և փառաւոր մօրուքով:)
- Դաւ.** Տեղ տըւէք ծերին: Պապիկ մօտեցիր:
- Դաղրած ես: Առաջ քիչ հանգըստացիր:
- Մի ասա, տեսնեմ, այդ ծեր հասակում  
ի՞նչ զործ ունիս տաք ճակատամարտում:
- Քեզ ի՞նչ վայել է ձեռորդ թուր առնել  
Եւ տըմբարմբալով կըոռւի դաշտ ենել:
- Ախ, հազար անէծք Մըսրամելիքին:
- Զոռով է բերել, առանց մեր կամքին:
- Ծերը**
- Ի՞նչպէս թէ զոռով:
- Հա, Դաւիթ, զոռով:
- Ինչքան զառամեալ ծերուկներ կային,  
Որ թուրըն հազիւ կարող են բըռնել,  
Ինչքան նորելուկ տըղաներ կային,  
Որոնք խաղերից դեռ չեն կըշտացել,  
Գանով, բըռունցքով
- Եւ մըտրակներով
- Այստեղ քըշեցին:
- Մըսուր մընացին
- Միայն խեղճ կանայք,  
Փոքրիկ երեխայք:
- Դաւ.** Այս, ես տեսայ կային թէ ծերեր
- Եւ թէ նորելուկ շատ պատանիներ:
- Ծերը**
- Մատաղ քո հոգուն, մեռնեմ արևիդ,  
Դըրանց մեղքի տակ մի՛ մըտնի, Դաւիթ.  
Որը կայ թազա փեսայ է—հարսին  
Թողել է իր տան արցունքըն աչքին.  
Որը՝ ճար-ճըրագ որդի է—իր մօր  
Թողել է մենակ խեղճ ու սպաւոր.
- Եւ որը՝ մանրիկ իր ճագուկներին  
Անտէր-անտէրունչ յանձնել է բախտին...

Դու հէք ես այդ խեղճ մարդկանց կոտորում  
Եւ մեզ, մեր որդոց ու մեր թռոներին  
Կայծակի թըրովը անխընայ փըրթում  
Առատ հընձի պէս թափում ես գետին...  
Քեզ ի՞նչ են արել այդ շիւարները,  
Այդ խեղճ ու կըրակ արարածները...  
Թէ քէն ունիս դու, քո սըրտի քէնը  
Հանիր անիրաւ Մըսրամելիքից.  
Մեզ էլ է նեղում այդ անօրէնը,  
Մենք էլ ենք այրուած նըրա չար ձեռից,  
Խսկ մեզ խընայիր, խընայիր, Դաւիթ,  
Դու, կանաչ-կըտրիճ Սասմայ քաջ իգիթ:  
Տես, ծեր տեղովըս չոքած առաջիկ՝  
Ոտքերըդ ընկած՝ փէշդ պազնում եմ,  
Յատուկ աղաչում և պաղատում եմ—  
Գըթա, ողորմի՛ր, խընայիր դու մեզ:

**Դաւ.** Վեր կաց, խեղճ ծերուկ, հերիք լաց լինես:  
Կարծում ես, թէ շատ ուրախ էի որ  
Տեսնում էի ես թըրիս տակ կանգնած  
Անբեղ պատանի կամ ծեր ալւոր՝  
Խնչպէս մեռելներ՝ ահից գունատուած...  
Բայց ի՞նչ անէի... կըուում տաքացած՝  
Զէի խընայում ձեզնից ոչ մէկին,  
Խնչպէս վայել է պատերազմողին:

**Ժերը.** Մեզնում կայ մի հին, լաւ սովորութիւն,  
Որին Մըհերը միշտ կը հետեւէր,  
Երբ որ մի հըսկայ ոխ ունէր սըրտում,  
Իր թըշնամու հետ այսպէս կը վարուէր:  
Կըուուի մէջ ոչ ոք չպիտի խառնուէր,  
Այլ երկու հոգով երես առ երես  
Պիտի ելնէին արձակ ասպարէզ.  
Սովորութիւնըն այսպէս էր ահա.  
Միւնոյնըն էլ դուք արէք հիմա:

**Դաւ.** Մեծ ուրախութեամբ ընդունում եմ այն,  
Խնչ որ ի՞նձ, ծերուկ, առաջարկեցիր.

Բայց կը ցանկայի իմանալ միայն,  
 Քո իղձըն էր այդ, որ ինձ յայտնեցիր,  
 Թէ Մըսրայ տէրը նոյնպէս կ'ուզենար,  
 Որ մեր կըոփւըն այսպէս վերջանար:  
 Ես երաշխաւոր կարող եմ լինել:  
**Դաւ.** Ուրեմըն այժըմ կարող ես մեկնել:  
 Գընա և յայտնիր Մըսրամելիքին,  
 Որ ըսպասում եմ իր պատասխանին:  
**Ճերը.** Հէնց որ շեփորի ձայներ կը լըսես,  
 Դա կոչի նըշան պիտի համարես:  
 (Մերը գնում է:)  
**Դաւ.** Աստուած խընայեց խեղճ տղաներին  
 Եւ այս ծերուկին ուղարկեց մեղ մօտ,—  
 Թէ չէ շատ մայրեր պիտի ողբային՝  
 Որդոց տեսութեան յաւիտեան կարօտ:  
 Բայց գիտես, Դաւիթ, թէկքեզ Աստուած  
 Տըւել է մեծ ոյժ և կարողութիւն,  
 Բայց վախենում եմ, մի՛ գուցէ յանկարծ  
 Քո դէմ կազմել են դաւադըրութիւն...  
**2-զին.** Թռող համարձակուեն... Հապա այստեղ մենք  
 Խնչի համար ենք, որ օրուայ համար...  
 Այնպիսի անգութ կոտորած կ'անենք,  
 Որ ոչ տեսել է, ոչ լըսել աշխարհ...  
**3-զին.** Ամենակարող մեր Տէր Երկնային,  
 Պահապան եղիր մեր ազիզ Դաւթին:  
**4-զին.** Աստուած, մեր պետին հովանի եղիր  
 Եւ մի փառաւոր յաղթութիւն բաշխիր:  
**Դաւ.** Իմ հաւատարիմ և քաջ ընկերներ,  
 Ա՛խ, մատաղ լինեմ ամենքիդ հոգուն,  
 Աստուած կը լըսի ձեր աղաչանքներ  
 Եւ մեղ յաղթութիւն կ'ուղարկի փայլուն:  
 (Թօնամու բանակից լտում են ըեփորի ձայներ: )  
 Նըշանը տրւին... Դէ, մընաք բարեւ:  
**1-զին.** Տար մահ մըսրացուն, դու մեր լոյս-արև:  
**Դաւ.** Մարութայ բարձր, սուրբ Աստուածածին,

Եւ դու աջ թեկիս խաչ-պատարագին,  
Օգնական եղէք նորելուկ Դաւթին:  
Քոլորեքնեան. Օգնական եղէք:  
Հեռների արծագանքը. Օգնական եղէք:—

## Պ Ա Տ Կ Ե Բ Ր 9

**Մ**սրամելիքի բանակը: Առաջնակողմում երևում է նրա  
վրանը, որը առանձնացած է միւս վրաններից և վերջին-  
ներից տարբերում է իր մեծութեամբ և կանաչ գոյնով:  
Մուտքի երկու կողմում կանգնած են խափշիկ պահապաններ՝  
զինուած երկայն նիզակներով,

**Մ**սրամելիքը պատուէրներ է տալիս Կոսբադինին և Զար-  
խադինին:

**Մ**սրամ. Դաւթի ծուղակը ճարպիկ կը հիւաէք,  
Որպէս զի ոչինչ կասկած չտանի,  
Եւ իր գետնափոր բանաիցը երբէք  
Չ'ենի լոյս-աշխարհ, արև չտեսնի:  
Կը փորէք քառուուն նետաչափ մի հոր,  
Բերնին կը ձըգէք երկաթէ մի թոռ,  
Թաղիք կը փըռէք թոռի երեսին,  
Որ իսպառ ծածկւի մեր այս մեծ գաղտնին.  
Եւ երբ կը ձըգէք ճաշի սեղանը,  
Կը տաք նըշանը:

**Կոս.** Վըստահ եղիք, տէք: Գընանք, Զարխադին:  
(Կոսբադինը Եւ Զարխադինը գնում են:)

**Մ**սրամ. Երբ Դաւթի կը գայ, քաջ պահապաններ,  
Կ'ասէք ըսպասի. Ես քընած եմ դեռ:

(Մսրամելիքը մոնում է վրանը: Թիշ յետոյ երևում է Դաւ-  
թիթը՝ նստած իր հրեղէն ձին, որը մօտալուտ կրիւը նախաղ-  
գալով խրինջում է: Դաւթիթը կանգ է առնում վրանի մուտքի  
առաջ:)

**Դ**աւ. Մըսրամելիքին կանչեցէք այստեղ,

Որ ըակըսենք մեր կրոիւըն ահեղ:  
1-ին պահ. Նա քընած է դեռ. եօթն օր է քընում:

Զ-ըդ պւսհ. Երեքըն անցաւ. Հորս օր է մընում:

Դաւ. Էլ քընիլ չկայ.

Կանչեցէք թող գայ:

Թէ անմահ է նա, ես մահ եմ բերել,

Թէ անզըրող է, զըրողն եմ բերել:

1-ին պւսհ. Նա չի արթնանայ,

Մինչե որ քընից լաւ չկըշտանայ:

Դաւ. Զարթեցըէք նըրան տաքացըրած շիշով,

Թէ այդ էլ չօխնեց,—գութանի խոփով:

Շնուտ արէք, թէ չէ խըփեցի սըրով:

(Զեռքը տանում է սրին: Պահապանները սարսափած ներս  
են մանում վրանը: Թիշ յետոյ կրկին դուրս են գալիս. Երևում  
է Մարամելքը և, Դաւթին տեսնելուն պէս, հպարտ փչում է  
նրա վրայ:)

Դաւ. Քո փըշելովը Դաւիթ վայր ընկաւ:

Մսրամ. Քո յանցանքներըն անթիւ են, անբաւ:

Դաւ. Ասա գէթ մէկըն իմ յանցանքներից:

Մսրամ. Մըհերի տըղայ, լաւ մըտիկ տու ինձ:

Քեզ ով իրաւունք տըւեց նորոգել

Մարութայ սարի Զարխափան վանքը,

Որ քանդել եմ ես, աւերակ դարձրել.—

Ահա առաջին քո մեծ յանցանքը:

Դաւ. Այդ իրաւունքն ինձ Աստուած տըւեց

Հըրեղէն պայծառ լոյսի նըշանով...

Այն, նա էր, որ ինձ հըրամայեց

Տաճարը շինել վաղեմի շրքով:

Դու կարծում էիր, այն աւերակը

Նոյն խեղճ դըրութեան միշտ պիտի մընար,

Եւ խըժդուժ գործիդ սև յիշատակը

Սերունդից սերունդ անցնէր դարէդար...

Ո'չ, վերականգնեց Մարութայ գըլխին

Պայծառ տաճարըն անխախտ, անսասան,

Եւ տաճարի մէջ նորից հընչեցին

Հոգեոր տաղեր, սաղմոս, շարական...

(Լուում է զանգերի ձայնը:)

Ահա—լըստւմ ես—վանքի զանգերը...

Նըրանց ձայն տըւին բոլոր ձորերը...

*Մսրամ.* Ես այդ ձայները շուտով կը կըտրեմ.

Տաճարը նորից քարուքանդ կ'անեմ:

*Դաւ.* Քանի որ շունչ կայ Դաւթի բերանում,

Մուրութայ վանքը կը մնայ կանգուն:

*Մսրամ.* Քանի կեանք ունիս, Մըհերի արդայ,

Որ հրպարտ կանգնած՝ խօսում ես անահ,

Այ ձեզ չը տեսնուած համարձակութիւն...

Բայց ես կը կոտրեմ քո հպարտութիւն:

Դու եօթը տարուայ իմ խարջը պահես

Եւ հաւասարիմ իմ ծառաներին

Բազմութեան առաջ ծեծես, անարգես,

Եւ առնես կոտը տաս ճակատներին...

*Դաւ.* Այս, արել եմ և չեմ ուրանում:

Բայց դեռ գըլխաւոր մի գործ է մընում,

Որի համար ես քեզ մօտ եմ եկել:

*Մսրամ.* Դու կամենում ես քո հյժը փորձել:

Շատ լաւ, կը փորձենք: Քիչ համբերութիւն:

Դաւթիթ, մենք ունինք մի սովորութիւն—

Կըոռուելուց առաջ սեղանի նըստել

Եւ ընկերաբար աղ ու հաց ուտել:

Կ'ուզես հետևել մեր սովորութեան:

*Դաւ.* Ես հակառակ չեմ հիւրասիրութեան:

(Գալիս են Կոսբաղինը Եւ Զարխաղինը:)

*Մսրամ.* Ուրեմըն զընա Կոսբաղինի հետ.

Ես էլ գալիս եմ. և իսկոյն և եթ:

(Կոսբաղինը առաջնորդում է Դաւթին դէպի պատրաստած տեղը: Նրանց ետևից գնում է և Զարխաղինը:)

Այսպէս կը խաբեն անխելք յիմարին:

Քո որոգայթը պատրաստ է արդէն:

Գընա, մօտեցիր քո զերեզմանին.

Հաշուած է կեանքիդ ամեն մի ըոպէն:

(Մտնում են Խամբի-Խանում Եւ Լէյլա:)

*Հէյ.* Հայրիկ, Դաւթի հետ, թէ ինձ կը սիրես,

- Կըրիւ չը մըտնես:
- Մարամ.* Ինչու, աղջիկըս. նոր բան ես լըսել:
- Հէյ.* Մի սարսափելի երազ եմ տեսել:
- Մարամ.* Իսկ ես տեսել եմ մի շատ լաւ երազ.
- Եւ եթէ պատմեմ, դու կ'ուրախանաս:
- Հէյ.* Ո՞չ, հայր, ինձ լըսիր, սիրառս շատ կախ է:
- Մարամ.* Իսկ իմը, Լէյլա, այնպէս ուրախ է:
- Հէյ.* Դու ծերացել ես, իսկ Դաւիթը—ջահէլ.
- Նա շատ ճարպիկ է, կարող է յաղթել:
- Մարամ.* Ինձ յաղթողը գեռ մօրից չէ ծընուած:
- Ո՞վ է Դաւիթը—մի խեղճ գառնարած:
- Հէյ.* Ա՛խ, նըրա մասին ինչեր են պատմում...
- Մարամ.* Օրինակ, ասա, ես նոր եմ լըսում,
- Հէյ.* Քառուն հարամի դևերին յաղթել,  
Զանդակ է զըրկել կոպավի զարկով:  
Քառուն առիւծի բերան է պատուել  
Պողպատի նըման ամուր ձեռքերով:
- Մարամ.* Ի՞նչ կայ որ, ես էլ կարող եմ անել.
- Հէյ.* Ասում են, նըրա աշ թէկի վըրան  
Կայ մի զօրաւոր խաչ-պատարագի,  
Որ պողովատէ երկաթի նըման  
Արգելք է լինում թուր ու նիզակի:
- Մարամ.* Ես էլ շատ ունիմ այդ թըլիսմերից,  
Եւ ապահով եմ պատահարներից:
- Հէյ.* Մի ձի էլ ունի, որ, ինչպէս կայծակ,  
Կըտրում է օդը և թրոչում հեռուն,  
Արձակուած նետից աւելի արագ  
Հասնում է իր դէմ կանդնած թըլնամուն:
- Իսկ նըրա կըտրուկ հըրեղէն սուրը,  
Հազիւ մի անգամ շարժում է կուրը,  
Երկաթէ ձողը միջից կիսում է:
- Մարամ.* Իսկ իմ կոպավը ջարդում անցնում է:
- Իսմ.* Մելիք, աղջիկըդ լաւ բան է ասում.
- Դու* նըրա խօսքին իզուր չես լըսում:
- Մարամ.* Ինչու, ասա ինձ, ես էլ իմանամ.

- Համ.* Գուցէ դու էլ ես վատ երազ տեսել:  
 Երեխաների սիրտը շատ անգամ  
 Կարողանում է նախագուշակել  
 Ամեն մի վրտանգ, ամեն մի աղէտ:  
 Ի՞նչ գործ ունիս դու Սասմայ ծըռփ հետ:
- Մսրամ.* Ո՞չ, երկուարդ էլ երազ էք տեսել.  
 Զուր մի՛ աշխատէք, չէք կարող պահել:  
 (Երեւում են Կոսբաղինը եւ Զարխաղինը, երկուսն էլ  
 անջափ ուրախ:)
- Մսրամ.* Այ, սա մեզ համար բերում է մի լուր.  
 Ի՞նչ լուր է, տեսնենք, ուրածի թէ աըխուր:  
 Դաւիթն ի՞նչ եղաւ:
- Կոս.* Դաւիթը զընաց և անհետացաւ:  
*Աէյ.* Այժմը նոր է նա:  
*Կոս.* Մի խոր ձորի մէջ փռուած է հիմա:  

*Մսրամ.* Կեցցէ Կոսբաղին: Այդ գործի համար:  
 Ընծաներ կը տամ անթիւ անհամար:  
*Աէյ.* Ուրեմըն... Դաւիթին գըցեցիք հորը:  

*Մսրամ.* Այն, թող զընայ գանգատուի հօրը:  
*Կոս.* Ի՞նչ միամիտ էր... ոչխարի նըման...  
 Սեղանի ծայրին հազիւ մօտեցաւ,  
 Ոտի տակ փըլուեց, ու գըլխի վըրան  
 Ակընթարթի մէջ գետինըն անցաւ:  
*Աէյ.* Հայր իմ, ուրեմըն էլ երկիւղ չկայ:  

*Մսրամ.* Ի՞նչ երկիւղ... Հորում կը փըտի հիմա:  
 Դաւիթ էլ չկայ:  
 Քո պայծառ աստղը, Սասում, խաւարեց,  
 Գալիս եմ ահա ես քո հաւարին...  
 Դաւիթն աշխարհի երեսից, ջընջուեց,  
 Անտէր մընացիր, օ, վայ քո օրին...  
 Լաց, Սասում, ողբա.  
 Դաւիթ էլ չկայ:  
 Դէհ, ուրախացէք, իմ զօրականներ,  
 Թըմրուկ զարկեցէք, հնչեցրէք փողեր..  
 (Կառում է քմբկի ձայն եւ փողանարութիւն:)

Հրամայում եմ ձեզ—վաղ առաւօտեան  
 Ամեն տեղ սրբութ ահեղ կոտորած,  
 Հըրդեհել գիւղեր, քանդել Զարխափան՝  
 Մարութայ գըլխին նորից կառուցուած...  
 Պատերապմական հարուստ աւարից  
 Դուք առաս բաժին կը ստանաք ինձնից.  
 Մերըն են Սասմայ բոլոր գանձերը,  
 Ես եմ այսուհետ և նըրա տէրը:  
 Զդիպչել միայն գեղեցիկ կանանց  
 Եւ կոյս աղջկանց.  
 Դըրանք բոլորը մեզ են պատկանում,  
 Դըրանց կը փակենք մեր հարեմներում:  
 Իսկ տղամարդկանց՝ թէ ծեր թէ ջահել՝  
 Անխընայ փըրթել սըրի անցընել...  
 Մեր վըրէժը կուշտ կը լուծենք հիմա.  
 Դաւիթ էլ չկայ:

## Պ Ա Տ Կ Ե Ր 10

Մորամելիքի բանակը մի ուրիշ կողմից, բաց ասպարէզք,  
 Սեղանս-սարի գլխից լսում է Ղճնով-Յոնանի որոտաձայն կոչը:

Ղճնով-Յոնանի ծայնը. Որտեղ ես, Դաւիթ.

Ի՞նչ եկաւ գըլխիդ...

Ցիշիր Մարութայ բարձր Աստուածածին,  
 Ցիշիր աջ թկիդ խաչ-պատարագին...

(Ցիշ յետոյ Մորամելիքի բանակի մէջ սկսում են ա-  
 ղաղակել. «Դաւիթը, Դաւիթը»... Մորամելիքը դուրս է գալիս  
 իր վրանից՝ զարմացած և անհանդիսաւ: Հեռուից շտապով գա-  
 լիս է Կոսբադինը՝ սարսափահար և մեռելի պէս գունատ:)

Մորամ. Այս ի՞նչ աղմուկ է լրաւում այն տեղից:

Կոս. Տէր իմ... Դաւիթը... եկել է հորից...

Մորամ. Դաւիթը... Ի՞նչպէս... և ի՞նչ հընարքով...

Կոս. Մենք էլ չգիտենք, թէ ի՞նչպէս և ով...

Կարող էր նըրան հորիցըն հանել:

*Մսրամ.* Ես հասկանում եմ... պարան են գցել...  
Նըրան օգնել են... Դաւաճանութիւն...  
Դու պիտի գըտնես այդ չարագործին.  
Իմ առաջ դժու ես պատասխանատուն...  
Գըտիր, եթէ՝ ոչ—օ, վայ քո օրին...

*Կոս.* Տէր, մի վըրդովուիր, եղիր ապահով,  
Որ յանցաւորը կը գըտնուի շուտով:

*Մսրամ.* Դէ իսկնյն և եթ, գըտէ՛ք և ըերէ՛ք:

(Կոսրադինը կամենում է գնալ, նրա հանդէպ երևում է  
Դաւիթը՝ սաստիկ. զայրոյթից աչքերն արնակալած:)

*Դաւ.* Կանգնեցէք անշարժ... Տեղից չը շարժուէք...

Ամօթ, բիւր ամօթ Մըրամելիքին,

Աշխարհանըռչակ, անյաղթ հըսկային...

Կըոռւելուց առաջ լաւ պատուեցիր ինձ.

Շընորհակալ եմ քո աղ ու հացից:

Բայց հեշտ կամեցար ինձնից ազատուել...

Դէ, շընորհ արա մէյզանը ենել:

*Մսրամ.* Կ'ելնեմ. քեզանից վախեցող չկայ.

Լեզուդ քեզ քաշիր, Մըների տըղայ:

Եթէ ինձանից բընաւ վախ չը կար,

Ինչու ուրեմըն դու չը կամեցար

Բաց կըուտում յաղթել քո ախոյեանին,

Ինչպէս վայել է ազնիւ զինւորին...

Այլ ցածահողի, վատ գողի նըման,

Իմ դէմ լարեցիր գարշելի դարան...

Մի նայիր այնտեղ—այն բըլրի գըլիխին.

Քաջերիս գունդը պատրաստի կանգնած.

Նըրանք ինձ իրնդրում, թախանձում էին,

Որ հըրամայեմ վըրայ տալ յանկարծ,

Երբ քո բանակըն առաւօտեան դէմ

Մըրափ էր մըտել՝ անփոյթ և անդէն...

Բայց ես չը թողի յարձակում գործել

Եւ յաղթութիւնը գողութեամբ կորզել...

Ազնիւ կըտրիճին վայել էր այսպէս:

Բայց դու բնչ արիր իմ դէմ, սևերես...

- Մսրամ.** Լըոփիր դու, ուամիկ, տըխմար խողարած.  
 Ինչպէս ես խօսում իմ առաջ կանգնած:  
 Ինձ համար մի մեծ պարծանք չէր, որ ես  
 կըոփւ անէի և յաղթէի քեզ:  
 Դա քեզ համար մեծ պատիւ կը լինէր:  
**Դաւ.** Ինչի՞ համար են այդ գոռող խօսքեր.  
 Թէ պիտի կըոռւես, ըսկըսենք շուտով.  
 Ինչ որ ասացիր, ցոյց տուր և գործով:  
**Մսրամ.** Ցոյց կը տամ իսկոյն: Թոն առաջ գընամ  
 Զըրահըս հագնեմ, պատրաստուեմ և գամ:  
**Դաւ.** Քեզ ըստառում եմ անհամբերութեամբ:  
 (Մտամելիիր զնում է դէպի իր վրանը: Դաւիր հա-  
 նում է սուրը եւ նայում:)
- Ո'վ** թուր-կայծակի, հաւատարմութեամբ  
 Մառայիր դու ինձ, Մըհերի որդուն,  
 Ինչպէս որ իմ հօրն էիր ծառայում:  
 (Երեւում են Խմիլ եւ Լէյլա եւ մօտենում են Դաւթին:)
- Հսմ.** Դաւիթ, զաւակըս, ինձ չես ճանաչում.  
**Դաւ.** Ես քո հարազատ մայրըն եմ, Դաւիթ:  
 Ի՞նչպէս հաւատամ ես քո խօսքերիդ...  
 Երանի չէ որ մայր ունենայի:  
 Մայր լինէր, ինչու որբ կը մընայի:  
 Եթէ մայրըս ես, ինչպէս ասացիր,  
 Հապա հէր դու ինձ մայրութիւն չարիր:  
 Ես որբ եմ եղել հօրից ու մօրից:  
**Հսմ.** Ո՛չ, թէկ հեռու էինք իրարից,  
 Բայց ուշ ու միտքըս քեզ հետ է եղել,  
 Քեզ միշտ սիրել եմ, կարօտըդ քաշել:  
 Եթէ դու, իրաւ, ինձ սիրում էիր,  
 Ինչու ուրեմըն ինձ հեռացըրիր,  
 Թողիր, որ մընամ անհէր ու անմէր,  
 Ամենքի աչքից ընկած ու անտէր...  
 Կամ ինչպէս է, որ դու յանձըն առար  
 Մըրամելիքին գընալ կընութեան,  
 Որ իմ հօր ծաղկած երկիրըն իսպառ

Մատնեց իր զօրքի ասպատակութեան...

Համ. Եթէ դա կախուած լինէր իմ կամքից,

Չէի թողնի քեզ բաժանեն ինձնից:

Դաւ. Իսկ հօ գիտէիր, ինչպէս նենդաբար  
Վըճռել էին ինձ կենդանի թաղել.

Ի՞նչ արիր որդուդ փըրկութեան համար.

Հարազատ որդուդ այդպէս ես սիրել...

Համ. Վայ, ջուխոտ աչքերով թող ես կուրանամ,  
Եթէ միայն ինձ յայտնի էր մի բան:

Դաւիթ, զաւակըս, կըոփւ մի՛ արէք.

Հաշտուեցէք և մեղ ուրախացըրէ՛ք:

Դաւ. Այդքան ցաւում ես քո մարդու համար:

Համ. Ցաւում եմ թէ՛ քեզ, թէ՛ նըրա համար:

ԱՀ. Ա՛խ, կանաչ-կըտրիճ Սասմայ քաջ իգիթ,  
Հաշտուիր հօրըս հետ, մեռնեմ արկիդ:

(Գալիս է Մըրամելիքը զրահաւորուած. գլխին մատաղեայ  
սաղաւարտ, մի ձեռքում ահագին վահան, իսկ միւս ձեռքում՝  
ծանր գուրզը:)

Մսրամ. Եթէ պատրաստ ես, դուրս եկ ասպարէզ:

Դաւ. Վաղուց պատրաստ եմ, ըսպասում եմ քեզ:

Մսրամ. Դու անցիր այն կողմ, իսկ ես— այստեղից:—

(Դաւիթն անցնում է:)

Առաջին զարկը պատկանում է ինձ:

Դաւ. Երկրորդ և երրորդ հարուածըն էլ քեզ,

Եթէ առաջին անգամ վըրիպես:

(Մսրամելիքը ձեռքով նշան է անում, փողերը հնչեցնում  
են: Դաւիթը ճարպիկութեամբ խուսափում է գուրզի հարուա-  
ծից, որ նետում է Մսրամելիքն իր բոլոր ուժով: Երկրորդ և  
երրորդ հարուածներն էլ չեն համում նպատակին:)

Մսրամ. (զայրոյթով) Անիծեալ եմ գուրզ դաւաճանեցիր...

Դաւ. Իմը է հերթը: Տեղումըդ կանգնիր:

(Դաւիթը հանում է կայծակի սուրը: Իսմիլը և Լէյլան  
միջամտում են:)

ԱՀ. Դաւիթ, խընայիր իմ հօր, մի սպանիր...

Համ. Այս խեղճ աղջըկան հօրից մի զըրկիր...

Դաւ. Ե՞յ, աշխարհ, աշխարհ... երբ նա էր խըփում,

Դուք, մայր և աղջիկ, պապանձուել էիք,  
իսկ երբ որ հերթը Դաւթին է հասնում,  
Յանկարծ լաց եղաք և հեկեկացիք...  
Նըշանը տըւէ՛ք: (Փողերը ննչեցնում են:)  
Ով դու, Մարութայ սուրբ Աստուածածին  
Եւ դու, աջ թեփս խաչ-պատարազին,  
Օգնական եղէք...

(Դաւիթը մի զօրաւոր հարուած է տալիս հակառակոր-  
դին: Մսրամելիքը մի զարհուրելի հառաչանք է արձակում և  
ընկնում է գետին այնպիսի թափով, կարծես մի ահագին քա-  
րափ վլուց և վայր ընկաւ գետին:)

Լէյ. (նշալով) Ա՛խ, հայր իմ, հայր իմ...

Հսմ. Օ՛, վայ մեր գըլխին...

Ճեղը. Կեցցէ՛ զոչեցէ՛ք. Կեցցէ՛ Դաւիթը:

Ամենքը Կեցցէ՛ Դաւիթը... Կեցցէ՛ Դաւիթը...

Դաւ. Մըսրայ ժողովուրդ, դէ՛, երթաք բարով:

Զեղ համար մի նոր իշխան ընտրեցէ՛ք,

Իմաստուն խելքով և գըթոտ սըրտով,

Եւ հաշտ ու խաղաղ կառավարուեցէ՛ք:

Ուրախացըրէ՛ք կըրկին ձեր կանանց,

Զեր խեղճ մայրերին, որդոց, աղջըկանց,

Որ սև սգի մէջ լալով շարունակ

Զէին ըսպասում, որ ետ կը դառնաք:

Զեր սուրբ վաթանը ես ձեղ եմ թողնում,

Զեղանից ոչինչ ես չեմ պահանջում:

Թող այսուհետև Սասում և Մըսուր

Մոռանան անցած օրերը տըխուր,

Քնող ծըլեն, ծաղկեն, մընան միշտ դալար

Սասում իր համար, Մըսուր իր համար:

Լիւոն Մանուէլեան